Շողե՛ր ջան

Ամպել ա, ձուն չի՛ գալի, Շողե՛ր ջան,
Սարիցը տուն չի՛ գալի, Շողե՛ր ջան,
Դուն շորորա՛, դուն օրորա՛, Շողե՛ր ջան,
Ամպի տակին ձուն կերևա, Շողե՛ր ջան:

Սիրտս կըրակով լըցված, Շողե՛ր ջան,
Աչքերիս քուն չի գալի, Շողե՛ր ջան,
Դուն շորորա՛, դուն օրորա՛, Շողե՛ր ջան,
Ամպի տակին ձուն կերևա, Շողե՛ր ջան:

Սարի գլխին ձուն եկավ, Շողե՛ր ջան,
Շեկլիկ յարըդ տուն եկավ, Շողե՛ր ջան,
Ուն կերևա, ձուն կերևա, Շողե՛ր ջան,
Բերդի տակին տուն կերևա, Շողե՛ր ջան:

Ամպել ա, ձուն չի՛ գալի,
Շողե՛ր ջան,
Սարիցը տուն չի՛ գալի,
Շողե՛ր ջան,
Դուն շորորա՛, դուն օրորա՛

Շողե՛ր ջան,
Ամպի տակին ձուն կերևա,
Շողե՛ր ջան:

Սիրտս կըրակով լըցված,
Շողե՛ր ջան,
Աչքիս քուն չի գալի,
Շողե՛ր ջան,
Դուն շորորա՛, դուն օրորա՛
Շողե՛ր ջան,
Ամպի տակին ձուն կերևա,
Շողե՛ր ջան:

Հուրք ա թափում վերիցը,
Ես վառա քո սերիցը,
Վարդավառին ինձ համար
Ձուն բեր դու սարերիցը:

Սարի գլխին ձուն եկավ,
Շողե՛ր ջան,
Շեկլիկ յարըդ տուն եկավ,
Շողե՛ր ջան,
Ուն կերևա, ձուն կերևա,
Շողե՛ր ջան,
Բերդի տակին տուն կերևա,
Շողե՛ր ջան:

Դեռ մուրազիս չըհասած,
Շողե՛ր ջան,
Վըրես խորունկ քուն եկավ,
Շողե՛ր ջան,
Ուն կերևա, ձուն կերևա,

Շողե՛ր ջան,
Բերդի տակին տուն կերևա,
Շողե՛ր ջան:

Աշունն եկավ սարիցը,
Տերև թափեց ծառիցը.
Շողոն դարդով լըցվել ա,
Հեռացել ա յարիցը: